ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 21.07/291
21.07.2014 թ.

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող
Միհրան Պողոսյանին

Պատճենը՝ ՀՀ արդարադատության նախարար
Հովհաննես Մանուկյանին

Հարգելի պարոն Պողոսյան,

2014 թվականի հունվարի 21-ին, իր իրավունքների պաշտպանության համար մեր կազմակերպություն է դիմել Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը: Դ. Հակոբյանի խնդիրը կայանում է հետևյալում.

1. **Գործի դատավարական նախապատմությունը**

1.1 2011 թվականին հուլիսի 29-ին Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը դիմելով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան խնդրել է նախկին կնոջ՝ Արփի Հովսեփյանին զրկել ծնողական իրավունքներից և որպես համատեղ ամուսնությունից ծնված երեխայի ապրուստի միջոց բռնագանձել ալիմենտ: Հետագայում՝ 06.02.2012 թվականին Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացում՝ երեխայի խնամքը հայցվորին թողնելու և բնակության վայրը հաստատելու պահանջների մասին: 28.06.2012 թվականին Դավիթ Հակոբյանը հրաժարվել է ալիմենտի պահանջից:

1.2 Դավիթ Հակոբյանի կողմից հայցադիմում ներկայացնելուց մոտ մեկ ամիս անց՝ 2011թ. օգոստոսի 15-ին Արփի Հովիկի Հովսեփյանի կողմից ընդդեմ Դավիթ Հակոբյանի ներկայացվել է հայցադիմում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարան՝ Դանիել Դավիթի Հակոբյանի բնակության վայրն իր հետ որոշելու պահանջով:

1.3 Դավիթ Հակոբյանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարան վարույթը կասեցնելու մասին միջնորդություն է ներկայացվել:

1.4 2011թ. սեպտեմբերի 7-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանը կայացրել է գործի վարույթը կասեցնելու մասին որոշում, մինչև ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

1.5 2012թ. հուլիսի 12-ին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը վճռով վճռել է. «Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու պահանջի մասին, մերժել: Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի խնամքի և բնակության վայրը հաստատելու պահանջների մասին, բավարարել, 03.05.2008 թվականին ծնված անչափահաս Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը թողել հորը՝ Դավիթ Հակոբյանին և երեխայի բնակության վայրը որոշել հոր բնակության վայրը՝ ՀՀ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարան հասցեն: Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի՝ ալիմենտ բռնագանձման մասին, կարճել»:

1.6 Սահմանված ժամկետում Արփի Հովսեփյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի դեմ:

1.7 2012թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարել է ներկայացված բողոքը մասնակի և գործն ուղարկել է նոր քննության:

1.8 2013թ. փետրվարի 1-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանը վերսկսել է գործի վարույթը, առանց ՀՀ-ում վերջնական դատական ակտի առկայության, ըստ էության կատարելով անօրինական գործողություններ:

1.9 2013թ. մայիսի 18-ին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը նշանակել է դատահոգեբանական փորձաքննություն, որի հիմքով էլ գործի վարույթը կասեցվել է:

1.10 2013թ. հունիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանը կայացրել է վճիռ, որով բավարարել է հայցը, Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքն ու դաստիարակությունը թողել է մոր՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր է սահմանել վերջինիս հետ:

1.11 Դավիթ Հակոբյանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանի որոշումը բողոքարկվել է ԼՂՀ վերաքննիչ և գերագույն դատարաններ, սակայն առաջին ատյանի դատարանի որոշումը մնացել է անփոփոխ և մտել է օրինական ուժի մեջ:

1.12 2013թ. սեպտեմբերի 12-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրվել է թիվ 1402/02/11 կատարողական թերթը, համաձայն որի Դանիել Հակոբյանի խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին և բնակության վայրը սահմանել վերջինիս հետ, որը ԼՂՀ ԴԱՀԿ-ի միջոցով ուղարկվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն:

1.13 2013թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի հարկադիր կատարող Բ. Աբրահամյանի կողմից կայացվել է կատարողական վարույթը վարույթ ընդունելու մասին որոշում, համաձայն որի Դանիել Հակոբյանի խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին և բնակության վայրը սահմանել վերջինիս հետ:

1.14 ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնում հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթի շրջանակներում 2013թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:00-ին նշանակվել է կատարողական գործողությունների կատարման օր, որը հետաձգվել է Դանիել Հակոբյանի հիվանդ լինելու պատճառով

1.15 ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնում հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթի շրջանակներում 2014թ. հունվարի 10-ին ժամը 12:00-ին նշանակվել է կատարողական գործողությունների կատարման օր:

1.16 2014 թվականի հունվարի 9-ին Դավիթ Հակոբյանի դիմումի հիման վրա կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող Միրան Պողոսյանին և ՀՀ Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին, որով պահանջվել է կասեցնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Լոռու մարզային բաժնում հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթը, մինչև Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վերջնական ակտ կայացնելը:

1.17 2014 թվականի հունվարի 31-ին ՀՀ Ան ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետ Ա. Բաղդագուլյանի կողմից ստացվել է թիվ 511 գրությունը, ըստ որի հայտնվել է, որ «Ձեր դիմումի և կատարողական վարույթի ուսումնասիրության արդյունքում ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնում վերսկսված թիվ 06-3489/13 կատարողական վարույթով երեխայի մորը՝ Արփի Հովսեփյանին հանձնելու վերաբերյալ կատարողական գործողությունները հետաձգվել են մինչև Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վճռի հրապարակումը:

1.18 2014 թվականի ապրիլի 17-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը ըստ հայցի Դավիթ Հակոբյանի ընդդեմ Արփի Հովսեփյանի պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի Վանաձորի և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի երեխայի խնամքի, բնակության վայրը հաստատելու պահանջի մասին կայացրել է վճիռ, ըստ որի երեխայի խնամքը հանձնվել է երեխայի մորը՝ Արփի Հովսեփյանին:

1.19 Վկայակոչված վճռի դեմ Դավիթ Հակոբյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը 2014 թվականի հունիսի 17-ին ընդունվել է վարույթ և նշանակվել է դատական քննության 2014 թվականի հուլիսի 24-ին:

1.20 2014 թվականի հուլիսի 16-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Լոռու մարզային բաժնի պետ Ա. Բաղդագուլյանի կողմից ստացվել է 2014 թվականի հուլիսի 14-ին կայացված որոշումը, ըստ որի որոշվել է պարտավորեցնել Դավիթ Հակոբյանին 2014 թվականի հուլիսի 24-ին

ժամը 12:00-ին երեխային՝ Դանիել Հակոբյանին ներկայացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի վարչական շենք:

2.Բողոքի իրավական հիմքերը, հիմնավորումները և պահանջը

2.1 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանը ի սկզբանե սույն բողոքի 1.2-րդ կետում նշված հայցադիմումը վարույթ ընդունելու, քննելու և վճիռ կայացնելու իրավունք չուներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ:

Սույն հոդվածի տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն դեպքում, երբ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճ, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դատարանը պետք է մերժի ներկայացված հայցադիմումի ընդունումը:

Ավելին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայան՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջեւ, նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ:

Ելնելով վերը նշվածից և հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 81 և 93-րդ հոդվածների դրույթները և այն հանգամանքը, որ Դավիթ Հակոբյանը նախօրոք ԼՂՀ դատարանին տեղյակ էր պահել, որ նույն փաստական հանգամանքներով գործ է քննվում ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ակնհայտ ապօրինի դատական ակտ:

2.2 ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (.....) Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող և փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը (...):

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի գործողություններն ուղղված ԼՂՀ դատարանի դատական ակտի կատարմանը իրավական որևէ փաստաթղթով ամագրված չէ, ավելին նման փաստաթուղթ ՀՀ իրավական ակտերը հրապարակող www.arlis.am էլեկտրոնային պաշտոնական կայքում գոյություն չունի:

ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարանում և առկա չէ վերջնական դատական ակտ և այն չի ստացել օրինական ուժ, դիմում եմ Ձեզ, կասեցնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Լոռու մարզային բաժնում հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթը, մինչև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը:

Կից ներկայացվում է

1. ԼՂՀ 02.10.2013թ. կատարողական վարույթ հարուցելու մասին որոշման պատճենը,
2. 28.07.2013թ. ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշման պատճենը,
3. 12.07.2012թ. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի պատճենը,
4. 18.05.2013թ. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը,
5. 25.10.2012թ. ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման պատճենը,
6. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ 28.10.2013թ. որոշման պատճենը,
7. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ 27.12.2013թ. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծանուցման պատճենը,
8. 31.01.2014 թ. ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետի կողմից ներկայացված պատասխան գրության պատճեն,
9. 17.06.2014թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման պատճեն,

10. 16.07.2014թ. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետի թիվ 06-3489/13 կատարողական վարույթով կայացված որոշման պատճեն:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք.Երևան, Գ.Նժդեհի 23, հեռ. + / 37410/ 44-84-08 /311/

N: ԴԴ-7/ 18465
<<03>> 07 2014թ.

Դավիթ Հակոբյանին
ք. Վանաձոր, Երևանյան խճ 117/5

Արփի Հովսեփյան
ԼՂՀ, Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր, 7-րդ թաղ. 62/1

Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմին
Լոռու մարզ, Վանաձոր, Հայքի հրպ.

ԼՂՀ Քաշաթաղի շրջ. Բերձորի
խնամակալության և հոգաբարձության մարմին
ԼՂՀ, ք. Բերձոր

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ուղարկում եմ բողոքը վարույթ ընդունելու մասին ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/0514/02/11 որոշումը՝ Ձեզ ի տեսություն:

Հայտնում եմ, որ համաձայն ՀՀ քաղ.դատ.օր. 218 հոդվածի իրավունք ունեք ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Միայն անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է թույլատրել Ձեզ նիստի ընթացքում բացատրություններ տալ: Ձեր չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Դատարան ներկայանալ ինքնությունը հաստատող փաստաթղթով:

Վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը մինչև գործի քննությունը:

Դատական նիստը նշանակված է 2014 թվականի հուլիսի 24-ին, ժամը 11:40-ին, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում /հասցե՝ ք. Երևան, Գ.Նժդեհի 23, 3-րդ հարկ, 321 դահլիճ/:

Կից որոշումը «1» թերթից

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Shuezlo ՇՈՒՇԱՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ինդեքս 2121 Վանաձոր Գ.Նժդեհի 16 հեռ. (0322) 4 30-68 (0322) 2-44-76

№ 8356
«16» 08 2014 թ.

Արփի Հովսեփյանին
ԼՂՀ Քաշաթաղի շրջ. ք. Բերձոր, 7 թղմ, 19/12

Պատճենը-Դավիթ Հակոբյանին
ք. Վանաձոր, Երևանյան խճ. 117/5

Ուղարկվում է ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 62 և 71 հոդվածների համաձայն հարկադիր կատարողի որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում և այն չկատարելու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված միջոցներ::

Բաժնի պետ
Արդարադատության գնդապետ Ա. Բաղդագյուլյան

Կատ. Բ. Աբրահամյան
Հեռ. (0322) 4-29-62
կ/վ 06-3489/13 մուտք Զ-937 24.10.2013թ.

[redacted]

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին

«14» հուլիսի 2014թ. ք. Վանաձոր

ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող՝ Բելա Աբրահամյանս, ուսումնասիրելով 02.10.2013թ. հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12.09.2013թ. տրված թիվ 1402/02/11 կատարողական թերթի համաձայն՝ պետք է Դանիել Դավիթի Հակոբյանի՝ ծնված 03.05.2008թ. խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայրը սահմանել վերջինիս հետ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ՀՀ օրենքի 28, 62, 71, 72 հոդվածի 1-ին մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտավորեցնել Դավիթ Հակոբյանին երեխային՝ Դանիել Հակոբյանին ներկայացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի վարչական շենք՝ 2014թ. հուլիսի 24-ին, ժամը 12.00-ին (ք. Երևան, Հալաբյան 41ա):

Որոշումը ենթակա է կատարման 24.07.2014թ-ին:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«ԴԱՀԿ» մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող

Արադադատության կապիտան..... Բ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ԼԴ/0514/02/11

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.06.2014 թ. ք.Երևան

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/
նախագահությամբ Ա.Պետրոսյանի
մասնակցությամբ Ա. Խառատյանի
Կ.Չիլինգարյանի

քննարկելով Դավիթ Հակոբյանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցն ըստ վերջինիս հայցի ընդդեմ Արփի Հովսեփյանի, պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ Վանաձորի և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի, Բերձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի խնամքի և բնակության վայրը հաստատելու պահանջի մասին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.04.2014 թվականի վճռի դեմ.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նշված վճռի դեմ բողոքը Վերաքննիչ դատարանի գրասենյակ մուտք է եղել 14.05.2014 թվականին:

Վերաքննիչ դատարանը գործը ստացել է 16.05.2014 թվականին:

Գործը հանձնվել է կազմին 19.05.2014 թվականին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքները ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-210 հոդվածների պահանջներին համապատասխան, վերաքննիչ բողոքները վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ, 145-րդ և 214 -րդ հոդվածներով՝ դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ և նշանակել քննության 2014 թվականի հուլիսի 24-ին, ժամը 11:40-ին, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում /հասցե՝ ք. Երևան, Գ.Նժդեհի 23, 3-րդ հարկ, 321 դահլիճ/:

Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախագահող դատավոր
Ա.Պետրոսյան

Դատավոր
Ա.Խառատյան

Դատավոր
Կ. Չիլինգարյան

Կրկնակի մեկ գրությունը ուղեցույց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք.Վանաձոր, Մ.Գոշի 6
հեռ. /0322/ 2-40-32

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0514/02/11

Ե- 7460/13
«29» մայիսի 2013 թվական

Դավիթ Հակոբյանին
/ք.Վանաձոր, Երևանյան խճ. 117-5/

Ձեզ է ուղարկվում թիվ ԼԴ/0514/02/11 քաղաքացիական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մայիսի 18-ին կայացրած որոշումը:

Առդիր՝ « » թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Վ.ՀՈՎՆԱՆՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին

18 մայիսի 2013 թվական | քաղաք Վանաձոր

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Վ.Հովնանյանի, դռնբաց դատական նիստում, մասնակցությամբ՝ հայցվոր Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի, հայցվորի ներկայացուցիչներ՝ Ալեքսանդր Ամարյանի և Արմեն Խառատյանի, պատասխանող Արփի Հովիկի Հովսեփյանի, քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի խնամքի և բնակության վայրը հաստատելու պահանջի մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը, դիմելով դատարան, հայտնել է, որ ինքը և Արփի Հովսեփյանն ամուսնացել են 19.09.2005 թվականին: Նրանց ամուսնությունը գրանցվել է Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնում: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, 03.05.2008 թվականին, նրանք ունեցել են մեկ երեխա՝ Դանիել Դավթի Հակոբյանին: Արփի Հովսեփյանի անբարոյական վարքագծի և ամուսնուն պարբերաբար դավաճանելու հետևանքով՝ նրանց համատեղ կյանքը դարձել է անհնարին, որի արդյունքում վերջիններս ամուսնալուծվել են: Դավիթ Հակոբյանի և Արփի Հովսեփյանի ամուսնությունը լուծվել է 15.02.2011 թվականին՝ Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնում, ինչի վերաբերյալ 15.02.2011 թվականին տրվել է թիվ ԱԲ003887 ամուսնալուծության վկայականը: Արփի Հովսեփյանը դեռևս Դավիթ Հակոբյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, սկսած 2010 թվականից, վարել է ոչ պարկեշտ ապրելակերպ: 2010 թվականի հուլիս-նոյեմբեր ամիսներին դավաճանել է ամուսնուն, սեռական հարաբերություններ է ունեցել երեք տարբեր տղամարդկանց հետ: Նա մինչև 2010 թվականը վարել է երկակի կյանք՝ սեռական հարաբերություններ ունենալով տարբեր

տղամարդկանց հետ և օգտվելով ամուսնու բացակայությունից: Պատասխանող Արփի Հովսեփյանը, չարաշահելով իր ծնողական իրավունքները, անբարոյական և վտանգավոր վարքագիծ դրսևորելով, վտանգել է անչափահաս Դանիել Հակոբյանի առողջությունը և կյանքը, երեխայի վրա գործել է վնասակար ազդեցություն: Մասնավորապես՝ վերջինիս ներկայությամբ օգտագործել է ծխախոտ, ոգելից խմիչքներ, երեխայի ներկայությամբ իրենց համատեղ բնակարանում ընդունել է անծանոթ տղամարդկանց: Վերջին ամիսների ընթացքում երեխան բնակվում է իր՝ Դավիթ Հակոբյանի հետ, գտնվում է հոր խնամքին, իսկ երեխայի մայրը՝ Արփի Հովսեփյանը, չարամտորեն խուսափում է իր ծնողական պարտականությունները կատարելուց և այդ ամբողջ երեք ամիսների ընթացքում որևէ անգամ ցանկություն չի հայտնել նույնիսկ երեխային տեսակցելու, ինչպես նաև չի մասնակցում երեխային խնամքին և դաստիարակությանը, չի հոգում նրա ապրուստը:

Ղեկավարվելով «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 1, 8, 9, հոդվածներով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43, 51, 59-61, 68-71 հոդվածներով, դատարանին խնդրել է Արփի Հովիկի Հովսեփյանին զրկել ծնողական իրավունքներից և նրանից հօգուտ անչափահաս Դանիել Հակոբյանի բռնագանձել ալիմենտ՝ ամսական եկամուտների քառորդ չափով կամ որոշել ամսական կայուն դրամական գումար՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Հայցվորը 06.02.2012 թվականին դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացում և հայտնել, որ համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ կետի՝ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Դատարանին խնդրել է Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը թողնել հորը՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին և երեխայի բնակության վայրը հաստատել հոր բնակության վայրը:

Արփի Հովսեփյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ հայցը չի ընդունում, առարկում է պահանջի դեմ, քանի որ կողմերի

ամուսնալուծությունը կատարվել է արտադատական կարգով, ուստի, օրենքով սահմանված կարգով դեռևս որոշված չէ, թե երեխան ծնողներից ում հետ պետք է ապրի նրանց ամուսնալուծվելուց հետո: Երեխան, որի խնամքի համար հայցվորը պահանջել է ալիմենտ, միչև հոր կողմից մոր կամքին հակառակ Վանաձոր տեղափոխելը, փաստացի բնակվել է մայր ծնողի հետ և գտնվել է նրա խնամքի ներքո: Այդ է վկայում Բերձոր մանկապարտեզի տնօրենի առ 19.08.2011 թվականի թիվ 34 գրությունը և նրան կից փաստաթղթերը, համաձայն որոնց՝ անչափահաս Դանիել Հակոբյանը հաշվառված է մանկապարտեզում 2010 թվականի մայիսի 14-ից մոր՝ Արփի Հովսեփյանի դիմումի համաձայն, և վճարումները կատարվել են նրա կողմից, ինչպես նաև՝ սկսած 2011 թվականի հուլիսի 22-ից անչափահասը համարվում է անհարգելի բացակա, այսինքն այն օրվանից, երբ հայրը մայր ծնողից գաղտնի նրան տեղափոխել է Վանաձոր քաղաք: Նույնը հաստատվում է նաև Քաշաթաղի շրջանային բուժմիավորում ՊՈԱԿ-ի 18.08.2011 թվականի թիվ 185 գրությամբ, համաձայն որի՝ անչափահասը հաշվառված է Քաշաթաղի շրջանի բուժմիավորումում, որտեղ գտնվել է բժշկական հսկողության տակ և ստացել պլանային պատվաստումներ: Պատասխանողը գտնում է, որ երեխային իր մշտական բնակության վայրից մոր կամքին հակառակ ժամանակավորապես Վանաձոր տեղափոխելը դեռևս իրավական հիմք չէ հայցվորի կողմից նրան խնամելու և ալիմենտ բռնագանձելու մասին դատարան դիմելու համար, առավել ևս, որ ընտանեկան օրենսգրքի 69, 70 և 17-րդ հոդվածների պահանջների կիրառման համար, երբ մայրը երեխայի բնակությաև վայրը որոշելու պահանջով դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարան: Հայցվորի պահանջները պատասխանողի կողմից չեն ընդունվում նաև այն պատճառով, որ հայցվոր կողմը նշված պահանջները ներկայացրել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ գլուխը, որը վերաբերվում է քաղաքացիական գործերի ընդդատությանը, միաժամանակ հստակեցնում է այն հայցերի շրջանակը, որոնք կարող են ներկայացվել ըստ հայցվորի բնակության վայրի:

Հայցվոր կողմը հայցի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները բաժնում, կարծիք ստեղծելու նպատակով, միանշանակ նշել է, որ պատասխանողը սկսած 2010 թվականից վարել է ոչ պարկեշտ ապրելակերպ և դավաճանել է ամուսնուն: Եթե հայցվորի ներկայացուցիչը հիմք է ընդունում այն փաստը, որ վստահորդը գրել է խոստովանագիր, որ իբր ինքը դավաճանել է ամուսնուն, ապա դա կատարվել է հայցվորի կողմից ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով և վստահորդը նման խոստավանագիրը գրել է իր և իր երեխայի կյանքը փրկելու համար, որի մասին հստակ նշված է ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարան ներկայացված «երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի մասին» հայցադիմումում, որն էլ դատարանի

2011 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և հարուցվել է 1402/02/2011 քաղաքացիական գործը: Հայցվորը նշել է, թե վերջին երեք ամիսների ընթացքում երեխան բնակվում է իր հետ, իսկ մայրը չարամտորեն խուսափում է իր ծնողական պարտականությունները կատարելուց և որ այդ երեք ամիսների ընթացքում որևէ անգամ նա ցանկություն չի հայտնել նույնիսկ երեխային տեսակցելու, չի մասնակցում երեխայի խնամքին և դաստիարակությանը և չի հոգում նրա ապրուստը, այս փաստեր, չեն համապատասխանում իրականությանը: Մինչև 2011թվականի հուլիսի 21-ը ներառյալ երեխան հաճախել է Քաշաթաղի մանկապարտեզ, և հայրը նրան Վանաձոր քաղաք է տեղափոխել միայն դրանից հետո: Պատասխանողը երբեք որպես մայր ծնող չի խուսափել ու չի խուսափում, առավել ևս չարամտորեն, իր ծնողական պարտականությունների կատարումից և հենց երեխան Բերձոր քաղաքից բացակայելու հաջորդ օրից սկսած հեռախոսով բազմաթիվ անգամ փորձել է նախկին ամուսնու հետ փոխհամաձայնության գալ, սակայն չի հաջողվել և նույնիսկ հայրը չի հայտնել իր և երեխայի գտնվելու վայրը, որի պատճառով Արփի Հովսեփյանը ստիպված է եղել դիմելու ԼՂՀ ոստիկանության Քաշաթաղի բաժին՝ որդու գտնվելու վայրը պարզելու խնդրանքով, և միայն ոստիկանապետի 02.09.2011 թվականի թիվ 21/4-2394 գրությամբ նրան հայտնի է դարձել երեխայի ստույգ գտնվելու վայրը և սեպտեմբերի 8-ին, երեխային տեսակցելու նպատակով, մեկնել է Վանաձոր քաղաք, որտեղ երեխայի հետ տեսակցելը հնարավոր է դարձել միայն Վանաձորի ոստիկանության աշխատակիցների միջամտությամբ, այն էլ հայցվորի հետ երկար բանակցություններ վարելուց հետո: Պատասխանողը, որպես մայր ծնող, իր հնարավորության սահմաններում կատարել է բոլոր անհրաժեշտ գործողություններն իր որդու գտնվելու վայրը պարզելու, նրա հետ տեսակցելու, հայր ծնողից երեխային հետ ստանալու համար ու մտահոգված է իր երեխայի ճակատագրով, պատասխանողի համար շատ կարևոր է իր ծնողական իրավունքներից օգտվելու հնարավորությունը դատական ճանապարհով:

24.02.2012 թվականին Արփի Հովսեփյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացման պատասխան և հայտնել, որ հայցվոր կողմի ներկայացրած պահանջը պատասխանողի կողմից չի ընդունվում ոչ միայն այն անհիմն լինելու պատճառով, այլև պատասխանող կողմը միանշանակ համոզված է, որ հայցվոր կողմը դատաքննության ներկա փուլում հարուցված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունք չունի, իսկ նման իրավունքն առանց հայցապահանջների բավարարման իրավունքի՝ առարկայազուրկ է և ոչ իրական: Եթե հայցվոր կողմը ի նկատի ունի, որ գործով պատասխանող Արփի Հովսեփյանը հանդիսանում է օտարերկրյա պետության քաղաքացի, ապա սխալվում է, քանի որ ինչպես գործով պատասխանող Արփի Հովսեփյանն, այնպես էլ հայցվոր Դավիթ Հակոբյանը

հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանը դատական նիստում միջնորդել է նշանակել դատահոգեբանական փորձաքննություն և փորձագետներին առաջադրել հետևյալ հարցը.

պարզել 03.05.2008 թվականին ծնված Դանիել Դավիթի Հակոբյանի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի և Արփի Հովիկի Հովսեփյանի հետ,

Ա.Հովսեփյանը դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու միջնորդության դեմ չառարկեց:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60 հոդվածի 1-ին կետի՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել: Կողմի միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերի համար վճարում է այդ կողմը:

Դատարանը ելնելով վերոգրյալից, գտնում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը պարզելու համար անհրաժեշտ է նշանակել դատահոգեբանական փորձաքննություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60 հոդվածով, 106 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 108 և 144 հոդվածներով, դատարանը

ՈՐՈՇԵՑ՝

1. Քաղաքացիական գործով ըստ հայցի Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին՝ երեխայի խնամքի և բնակության վայրը հաստատելու պահանջի մասով, նշանակել դատահոգեբանական փորձաքննություն:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝

ա/ պարզել 03.05.2008 թվականին ծնված Դանիել Դավիթի Հակոբյանի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի և Արփի Հովիկի Հովսեփյանի հետ,

բ/ պարզել 03.05.2008 թվականին ծնված Դանիել Դավիթի Հակոբյանի ծնողների՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի և Արփի Հովիկի Հովսեփյանի բարոյական և անձնական

հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,

գ/ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի և Արփի Հովիկի Հովսեփյանի բարոյական և անձնական հատկանիշներից ելնելով, պարզել երեխայի՝ 03.05.2008 թվականին ծնված Դանիել Դավիթի Հակոբյանի դաստիարակության ու զարգացման համար նրանցից յուրաքանչյուրի պայմաններ ստեղծելու հնարավորությունը:

3. Փորձաքննության կատարումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին և նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339 հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

4. Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին և Արփի Հովիկի Հովսեփյանին պարտավորեցնել ներկայանալ փորձաքննությանը, ինչպես նաև Դավիթ Հակոբյանին պարտավորեցնել ապահովել որդու՝ Դանիել Դավթի Հակոբյանի մասնակցությունը փորձաքննությանը:

5. Նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են հայցվորի հաշվին՝ փորձագետների կողմից ներկայացվող ծախսերի հաշվարկի հիման վրա:

6. Սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնել մինչև փորձագետի եզրակացություն ստանալը:

7. Սույն որոշումը՝ փորձաքննություն նշանակելու մասով ուժի մեջ է մտնում կայացման պահից, իսկ կասեցման մասով կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից՝ որոշումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Վ.ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0026, ՀՀ ք. Երևան Գ. Նժդեհի 23, հեռ. +37410 448408-319 Ֆաքս +37410 441790, էլ. Փոստ Qax.ver-dataran@mail.am

ԴԴ-7/ 574

«25» հոկտեմբերի 2012թ. ԼԴ/0514/02/11

Դավիթ Հակոբյանին
/ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի 117/5 /

Ձեզ է տրամադրվում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2012 թվականի որոշման օրինակը:

Առդիր որոշում «5» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գործ ԼԴ /0514/02/11

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2012թվականի հուլիսի 12-ին Վանաձոր քաղաքում

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ	Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝	Ա.ՄԱՑԱԿՅԱՆԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ	
ՀԱՅՑՎՈՐ	Դ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Ա.ԱՄԱՐՅԱՆԻ
ՊԱՏԱՍԽԱՆՈՂ	Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Ա.ՄԱԴԱԹՅԱՆԻ
ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Լ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի /անձնագիր՝ AF 0339048, տրված 12.06.2001թվականին 018-ի կողմից/ ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու, ալիմենտ բռնագանձելու, երեխայի խնամքի և բնակության վայրը հայցվորի բնակության վայրը հաստատելու պահանջների մասին.

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանը 29.07.2011թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու և ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին:

Դատարանի 03.08.2011թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

20.09.2011թվականին Արփի Հովսեփյանի ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանը ներկայացրել է հայցադիմումի պատասխան:

06.02.2012թվականին Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանը ներկայացրել է հայցադիմումի լրացում՝ երեխայի խնամքն իրեն թողնելու և բնակության վայրը հաստատելու պահանջների մասին:

24.02.2012թվականին Արփի Հովսեփյանի ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացման պատասխան:

Դատարանի 30.05.2012թվականի որոշմամբ մերժվել է հայցվոր Դավիթ Հակոբյանի միջնորդությունը՝ սոցիալ-հոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին:

28.06.2012թվականին հայցվոր Դավիթ Հակոբյանը հրաժարվել է ալիմենտի պահանջից:

28.06.2012թվականին ավարտվել է գործի քննությունը և 12.07.2012թվականին հայտարարվել վճռի հրապարակման օրը:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Դիմելով դատարան՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանը հայտնել է, որ Դավիթ Հակոբյանը և Արփի Հովսեփյանն ամուսնացել են 19.09.2005թվականին: Նրանց ամուսնությունը գրանցվել է Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնում: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, 03.05.2008թվականին, նրանք ունեցել են մեկ երեխա՝ Դանիել Դավթի Հակոբյանին: Արփի Հովսեփյանի անբարոյական վարքագծի և ամուսնուն պարբերաբար դավաճանելու հետևանքով՝ նրանց համատեղ կյանքը դարձել է անհնարին, որի արդյունքում վերջիններս ամուսնալուծվել են: Դավիթ Հակոբյանի և Արփի Հովսեփյանի ամուսնությունը լուծվել է 15.02.2011թվականին՝ Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնում, ինչի վերաբերյալ 15.02.2011թվականին տրվել է թիվ ԱԲ003887 ամուսնալուծության վկայականը: Արփի Հովսեփյանը դեռևս Դավիթ Հակոբյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, սկսած 2010թվականից, վարել է ոչ պարկեշտ ապրելակերպ: 2010թվականի հուլիս-նոյեմբեր ամիսներին դավաճանել է ամուսնուն, սեռական հարաբերություններ է ունեցել երեք տարբեր տղամարդկանց հետ: Նա մինչև 2010թվականը վարել է երկակի կյանք՝ սեռական հարաբերություններ ունենալով տարբեր տղամարդկանց հետ և օգտվելով ամուսնու բացակայությունից: Պատասխանող Արփի Հովսեփյանը, չարաշահելով իր ծնողական իրավունքները, անբարոյական և վտանգավոր վարքագիծ դրսևորելով, վտանգել է անչափահաս Դանիել Հակոբյանի առողջությունը և կյանքը, երեխայի վրա գործել է վնասակար ազդեցություն: Մասնավորապես՝ վերջինիս ներկայությամբ օգտագործել է ծխախոտ, ոգելից խմիչքներ, երեխայի ներկայությամբ իրենց համատեղ բնակարանում ընդունել է անծանոթ տղամարդկանց: Վերջին երեք ամիսների ընթացքում երեխան բնակվում է իր հոր՝ Դավիթ Հակոբյանի հետ և գտնվում է հոր խնամքին, իսկ երեխայի մայրը՝ Արփի Հովսեփյանը, չարամտորեն խուսափում է իր ծնողական պարտականությունները կատարելուց և այդ ամբողջ երեք ամիսների ընթացքում որևէ անգամ ցանկություն չի հայտնել նույնիսկ երեխային տեսակցելու, ինչպես նաև չի մասնակցում երեխային խնամքին և դաստիարակությանը, չի հոգում նրա ապրուստը:

Համաձայն <<Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Համաձայն <<Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Համաձայն <<Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի /ֆիզիկական, հոգեկան և այլ/ բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի՝ երեխան ունի իր ծնողների չարաշահումներից պաշտպանվելու իրավունք:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ ծնոնդերը պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխայի շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:

Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը: Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Համաձայն ՀՀ ընկանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի՝ ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց.

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից.

գ)չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա.

դ)դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը.

ե)տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ.

զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի՝ ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին:

Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն:

Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն)՝ սույն օրենսգրքի 15-րդ գլխին համապատասխան:

Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական

կարգով, ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝ մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդի չափով:

Խնդրել է Արփի Հովիկի Հովսեփյանին զրկել ծնողական իրավունքներից և նրանից հօգուտ անչափահաս Դանիել Հակոբյանի բռնագանձել ալիմենտ՝ ամսական եկամուտների քառորդ չափով կամ որոշել ամսական կայուն դրամական գումար՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Հայցվորի ներկայացուցիչը 06.02.2012թվականին դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացում և հայտնել, որ, համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ կետի, ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիներից ծնված երեխան ՀՀ քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, ունի ՀՀ քաղաքացիության իրավունք: ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող զրկվել ՀՀ քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից: ՀՀ քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Հայցվորի ներկայացուցիչը գտնում է, որ երեխային Հայաստանի Հանրապետությունից դուրս հանելը կհակասի ՀՀ Սահմանադրությանը:

Խնդրել է Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը թողնել հորը՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին և երեխայի բնակության վայրը հաստատել հոր բնակության վայրը:

Դատաքննությամբ հայցվոր Դավիթ Հակոբյանը հայտնեց, որ Արփի Հովսեփյանը բացատրագիր է գրել խաղաղ պայմաններում, հարց է առաջանում, թե ինչու պիտի գրեր մի բան, որը կվնասեր իրեն, բացատրագիրը գրելուց հետո երդվել է, որ նորմալ մարդ է, տուն վերադառնալով հայտնաբերվել է ծխախոտի մնացորդներ, տղամարդու թաշկինակ, Արփի Հովսեփյանը համատեղ ամուսնական կյանքի ընթացքում չի ծխել, բացատրագիրը գրել է ինտերնետային նամակագրական կապը հաստատող ապացույցների ճնշման տակ, ապացույցների չնչին մասը ձեռք բերելուց հետո հայտնել է, որ չի կարող Արփին իրեն այլևս խաբել, նա հայտնել է, որ այլևս չի անի, պատասխանողն ընդունել է, որովհետև այլընտրանք չի եղել, հայցվորը և ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանը պնդեցին ներկայացված պահանջները և խնդրեցին բավարարել, իսկ 28.06.2012թվականի դատական նիստի ընթացքում հայցվոր Դավիթ Հակոբյանը հրաժարվեց ներկայացված ալիմենտի պահանջից, պնդեց պահանջը մնացած մասով:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանողի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ հայցը չի ընդունում, առարկում է պահանջի դեմ, իր կողմից ընդունվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-71 հոդվածների պահանջները, սակայն չի ընդունվում այն, որ հոդվածների պահանջներն ըստ հայցվորի ներկայացուցչի կարծիքի պետք է կիրառվեն պատասխանողի նկատմամբ: Նման մոտեցումը ծնողական

պարտականություններից հրաժարվելու միտում չի հետապնդում, այլ միայն դրանով պատասխանող կողմը փորձում է պաշտպանել որպես մայր ծնողի իր իրավունքները, որը չի հակասում երեխայի շահերին:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը քննարկվում են դատական կարգով՝ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց՝ սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ երեխաների նկատմամբ, իսկ 53-րդ հոդվածի 3-րդ մասը միանշանակ նշում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից:

Քանի որ կողմերի ամուսնալուծությունը կատարվել է արտադատական կարգով, ուստի, համաձայն օրենքի վերոհիշյալ պահանջների, օրենքով սահմանված կարգով դեռևս որոշված չէ, թե երեխան ծնողներից ում հետ պետք է ապրի նրանց ամուսնալուծվելուց հետո: Չնայած երեխան, որի խնամքի համար հայցվորը պահանջում է ալիմենտ, միչև հոր կողմից մոր կամքին հակառակ Վանաձոր տեղափոխելը, փաստորեն բնակվել է մայր ծնողի հետ և գտնվել է նրա խնամքի ներքո: Այդ է վկայում Բերձոր մանկապարտեզի տնօրենի առ 19.08.2011թվականի թիվ 34 գրությունը և նրան կից փաստաթղթերը, համաձայն որոնց՝ անչափահաս Դանիել Հակոբյանը հաշվառված է մանկապարտեզում 2010թվականի մայիսի 14-ից մոր՝ Արփի Հովսեփյանի դիմումի համաձայն, և վճարումները կատարվել են նրա կողմից, ինչպես նաև՝ սկսած 2011թվականի հուլիսի 22-ից անչափահասը համարվում է անհարգելի բացակա, այսինքն այն օրվանից, երբ հայրը մայր ծնողից գաղտնի նրան տեղափոխել է Վանաձոր քաղաք: Նույնը հաստատվում է նաև Քաշաթաղի շրջանային բուժմիավորում ՊՈԱԿ-ի 18.08.2011թվականի թիվ 185 գրությամբ, համաձայն որի՝ անչափահասը հաշվառված է Քաշաթաղի շրջանի բուժմիավորումում, որտեղ գտնվել է բժշկական հսկողության տակ և ստացել պլանային պատվաստումներ: Պատասխանողի ներկայացուցիչը գտնում է, որ երեխային իր մշտական բնակության վայրից մոր կամքին հակառակ ժամանակավորապես Վանաձոր տեղափոխելը դեռևս իրավական հիմք չէ հայցվորի կողմից նրան խնամելու և ալիմենտ բռնագանձելու մասին դատարան դիմելու համար, առավել ևս, որ ընտանեկան օրենսգրքի 69, 70 և 17-րդ հոդվածների պահանջների կիրառման համար, երբ մայրը երեխայի բնակությթան վայրը որոշելու պահանջով դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարան: Հայցվորի պահանջները պատասխանողի կողմից չեն ընդունվում նաև այն պատճառով, որ հայցվոր կողմը նշված պահանջները ներկայացրել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ գլուխը, որը վերաբերվում է քաղաքացիական գործերի ընդդատությանը, միաժամանակ հստակեցնում է այն հայցերի շրջանակը, որոնք կարող են ներկայացվել ըստ հայցվորի բնակության վայրի, որոնց թվում հիշատակված չէ ծնողական իրավունքից զրկելու մասին հայցը: Պատասխանող կողմը համոզված է, որ հայցվոր կողմը փորձել է օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից՝ հաշվելով, որ հայցվորի բնակության վայրը համարվում է Վանաձոր քաղաքը, մի կարևոր հանգամանք, որը չի համապատասխանում իրականությանը:

Համաձայն <<ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրությունը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12.1998թվականի թիվ 821 որոշման 23-րդ կետի՝ մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես: Պատասխանողի ներկայացուցիչը գտնում է, որ հայցվոր կողմի մշտական բնակության վայր է համարվում ոչ թե Վանաձոր, այլ Բերձոր քաղաքը, քանի որ հայցվորն

իր ծնողների հետ, որպես վերաբնակեցված ընտանիքի անդամ, դեռևս 2005թվականի մայիսի 25-ին զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության հենց Քաշաթաղի զինկոմիսարիատից և զորացրվելուց հետո, 2007թվականի մայիսի 29-ին, հաշվառվել է նույն զինկոմիսարիատում և հաշվառումից դուրս է գրվել միայն 2011թվականի հունիսի 24-ին՝ երեխային տեղափոխելու նախօրեին: Բացի այդ, հայցվորն ընտանիք է կազմել Քաշաթաղում, ամուսնությունը և երեխայի ծնունդը գրանցվել է Քաշաթաղում, ամուսնալուծությունը նույնպես կատարվել է Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնի կողմից, Քաշաթաղ համայնքի անդամների, Բերձոր համայնքի ավագանու 31.03.2010թվականի թիվ 18 որոշմամբ նրան և նրա ընտանիքի անդամներին հատկացվել է նույն քաղաքի 7-րդ թաղամասի 62/11 հասցեում գտնվող բնակարանը և կնքվել թիվ 11 պայմանագիրը, համաձայն որի՝ այն հատկացվել է անհատույց՝ հինգ տարի բնակվելուց հետո սեփականաշնորհելու պայմանով: <<Արցախբանկ>> ՓԲ ընկերության 19.08.2011թվականի թիվ 175/11 գրությամբ հայցվոր կողմը, տեղեկանքի տրման օրվա դրությամբ, հանդիսանում է <<Արցախբանկ>> ՓԲ ընկերության <<Բերձոր>> մասնաճյուղի աշխատակիցը, որտեղ աշխատում է որպես վարկային և ավանդային բաժնի մասնագետ: Հայցվոր կողմը, փորձելով դատարանին ապակողմնորոշել, հայցվորի հասցեն հայցադիմումում նշել է Վայք քաղաքի Շահումյան փողոցի թիվ 15 տունը, իմանալով, որ պատասխանողը 2005թվականից ընդհանրապես այնտեղ չի բնակվել, միաժամանակ նշելով, որ վերջին ժամանակներս բնակվել է նաև Բերձոր քաղաքում՝ պարզ գիտակցելով, որ պատասխանողը հանդիսանում է Բերձոր քաղաքի մշտական բնակչուհի, այդ է պատճառը, որ դատարանը հնարավորություն չի ունեցել հայցադիմումը և նրան կից փաստաթղթերի պատճենները ժամանակին և պատշաճ ձևով պատասխանողին ուղարկելու:

Պատասխանող կողմը գտնում է որ ծնողական իրավունքներից զրկելու պահանջն անհիմն է:

Հայցվորը կողմն իր հայցադիմումում նշել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածը, սակայն կոնկրետ չի մատնանշել, թե տվյալ հիմքերից որ մեկն է խախտվել պատասխանողի կողմից և որն է, որ պետք է կիրառվի նրա նկատմամբ: Հայցվոր կողմը հայցի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները բաժնում, կարծիք ստեղծելու նպատակով, միանշանակ նշել է, որ իր վստահորդը սկսած 2010թվականից վարել է ոչ պարկեշտ ապրելակերպ և դավաճանել է ամուսնուն, նույնիսկ ներկայացուցիչը, հակառակ բարոյական նորմերի, իրեն իրավունք է վերապահել նշելու, որ <<սեռական հարաբերություն է ունեցել երեք տարբեր տղամարդկանց հետ>>, նույնիսկ հանուն քաղաքավարության չնշելով, որ այդ մասին ինքը տեղեկացել է իր վաստահորդից: Եթե հայցվորի ներկայացուցիչը հիմք է ընդունում այն փաստը, որ վստահորդը գրել է խոստովանագիր, որ իբր ինքը դավաճանել է ամուսնուն, ապա դա կատարվել է հայցվորի կողմից ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով և վստահորդը նման խոստավանագիրը գրել է իր և իր երեխայի կյանքը փրկելու համար, որի մասին հստակ նշված է ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարան ներկայացված <<երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի մասին>> հայցադիմումում, որն էլ դատարանի 2011թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և հարուցվել է թիվ 1402/02/2011 քաղաքացիական գործը: Հայցվորը նշել է, թե վերջին երեք ամիսների ընթացքում երեխան բնակվում է իր հետ, իսկ մայրը չարամտորեն խուսափում է իր ծնողական պարտականությունները կատարելուց և որ իր այդ երեք ամիսների ընթացքում որևէ անգամ նա ցանկություն չի հայտնել նույնիսկ երեխային տեսակցելու, չի մասնակցում երեխայի խնամքին և դաստիարակությանը և չի հոգում նրա ապրուստը, փաստեր, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Ինչպես կարող է հայցադիմումը գրելու պահին, 2011թվականի հուլիսի 28-ի դրությամբ, երեխան երեք ամիս գտնվեր հոր խնամքին, երբ, համաձայն մանկապարտեզի տնօրենի վերը հիշատակված տեղեկանքի, մինչև 2011թվականի հուլիսի 21-ը ներառյալ, երեխան հաճախել է Քաշաթաղի մանկապարտեզ և հայրը նրան Վանաձոր քաղաք է տեղափոխել

միայն դրանից հետո: Պատասխանողի ներկայացուցիչը դրանից հետևություն է անում, որ մյուս հիմնավորումները նույնպես անհիմն են: Պատասխանողը երբեք որպես մայր ծնող չի խուսափել ու չի խուսափում, առավել ևս չարամտորեն, իր ծնողական պարտականությունների կատարումից և հենց երեխան Բերձոր քաղաքից բացակայելու հոջորդ օրից սկսած՝ հեռախոսով բազմաթիվ անգամ փորձել է նախկին ամուսնու հետ փոխհամաձայնության գալ, սակայն չի հաջողվել և նույնիսկ հայրը չի հայտնել իր և երեխայի գտնվելու վայրը, որի պատճառով Արփի Հովսեփյանը ստիպված է եղել դիմելու ԼՂՀ ոստիկանության Քաշաթաղի բաժին՝ որդու գտնվելու վայրը պարզելու խնդրանքով և միայն ոստիկանապետի 02.09.2011թվականի թիվ 21/4-2394 գրությամբ նրան հայտնի է դարձել երեխայի ստույգ գտնվելու վայրը և սեպտեմբերի 8-ին, երեխային տեսակցելու նպատակով, մեկնել է Վանաձոր քաղաք, որտեղ երեխայի հետ տեսակցելը հանարվոր է դարձել միայն Վանաձորի ոստիկանության աշխատակիցների միջամտությամբ, այն էլ հայցվորի հետ երկար բանակցություններ վարելուց հետո: Պատասխանողը, որպես մայր ծնող, իր հնարավորության սահմաններում կատարել է բոլոր անհրաժեշտ գործողություններն իր որդու գտնվելու վայրը պարզելու, նրա հետ տեսակցելու, հայր ծնողից երեխային հետ ստանալու համար ու մտահոգված է իր երեխայի ճակատագրով, պատասխանողի համար շատ կարևոր է իր ծնողական իրավունքներից օգտվելու հնարավորությունը դատական ճանապարհով, որ նրա վարքագիծը չի անցնում այն սահմանը, որը կարող է բավարար հիմք հանդիսանալ մոր համար ամենաթանկ՝ մայրական իրավունքից զրկելու համար, առավել ևս որ դա չի բխում երեխայի շահերից:

Խնդրել է հայցվորի պահանջները մերժել:

24.02.2012թվականին Արփի Հովսեփյանի ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի լրացման պատասխան և հայտնել, որ հայցվոր կողմի ներկայացրած պահանջը պատասխանողի կողմից չի ընդունվում ոչ միայն այն անհիմն լինելու պատճառով, այլև պատասխանող կողմը միանշանակ համոզված է, որ հայցվոր կողմը դատաքննության ներկա փուլում նման հայց հարուցելու իրավունք չունի, այսինքն, ավելի ճիշտ, հարուցված հայցապահանջների բավարարում ստանալու իրավունք չունի, իսկ նման իրավունքն առանց հայցապահանջների բավարարման իրավունքի՝ առարկայազուրկ է և ոչ իրական:

Եթե հայցվոր կողմը ի նկատի ունի, որ գործով պատասխանող Արփի Հովսեփյանը հանդիսանում է օտարերկրյա պետության քաղաքացի, ապա մեղմ ասած սխալվում է, քանի որ ինչպես գործով պատաղանող Արփի Հովսեփյանն, այնպես էլ ինքը, որպես նրա լիազոր ներկայացուցիչ, հայցվոր Դավիթ Հակոբյանի և նրա լիազոր ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի պես ու նրանց հավասար հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Դատաքննությամբ պատասխանող Արփի Հովսեփյանը հայտնեց, որ բացատրագիրը գրել է ընտանիքը փրկելու նպատակով, մտածել է, որ հայցվորը նյարդայնացած է և հետագայում կխաղաղվի, պատասխանողը և ներկայացուցիչը պնդեցին իրենց առարկությունները և խնդրեցին հայցը մերժել:

<u>4.Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի իրավական դիրքորոշումը</u>.

Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչ Լեոնուհի Գևորգյանը դատարան է ներկայացրել Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2011թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 22 նիստի արձանագրությունը և հայտնել, որ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը որոշել է, որ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու մասին հնարավոր չէ տալ եզրակացություն, քանի որ Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմինը չի կարող

կատարել երեխայի խնամքին և դաստիարակությանը հավակնող կողմերի կյանքի պայմանների լիարժեք հետազոտություն, երեխայի խնամքի և դաստիարակության համար Դավիթ Հակոբյանն ունի բավարար բնակարանային և կենցաղային պայմաններ: 2012թվականի մայիսի 11-ի թիվ 11 նիստի արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է, որ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու հնարավորության մասին տալ բացասական եզրակացություն, իսկ երեխայի՝ Դանիել Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև 3 ամիս ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ դրական եզրակացություն.

5.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

- 03.05.2008թվականին ծնված Դանիել Դավիթի Հակոբյանի հայրն է Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը, իսկ մայրը՝ Արփի Հովիկի Հովսեփյանը.
- Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի և Արփի Հովիկի Հովսեփյանի ամուսնությունը լուծվել է 15.02.2011թվականին՝ Քաշաթաղի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից.
- Անչափահաս Դանիել Հակոբյանը հոր՝ Դավիթ Հակոբյանի հետ 2011թվականի հուլիսից բնակվում է Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117շենքի 5 բնակարանում.
- Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարանի համասեփականատերն է հանդիսանում Դավիթ Հակոբյանը.
- Խնձորուտ համատիրության 29.07.2011թվականի տեղեկանքի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարանում հաշվառված են Դավիթ Հակոբյանը, մայրը՝ Աիդա Թումայնաը և որդին՝ Դանիել Հակոբյանը.
- ՀՀ Լոռու մարզի թիվ 28 ՆՈՒՀ համայնքային ոչ առևտրային կազմակերպության 06.12.2011թվականի տեղեկանքի համաձայն՝ Դանիել Հակոբյանը հաճախում է Վանաձորի 28 ՆՈՒՀ.
- Քաշաթաղի ոստիկանության պետի 02.09.2011թվականի գրությամբ Արփի Հովսեփյանը տեղեկացվել է այն մասին, որ Դանիել Հակոբյանը և նախկին ամուսին Դավիթ Հակոբյանը բնակվում են ՀՀ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117շենքի 5 բնակարանում.
- Արփի Հովսեփյանի կողմից 11.01.2011թվականին բացատրագիր է գրվել իր ամուսնուն դավաճանելու և իր վարքագծի մասին.
- Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովը 2012թվականի մայիսի 11-ի թիվ 11 նիստի արձանագրությամբ որոշել է, որ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու հնարավորության մասին տալ բացասական եզրակացություն, երեխայի՝ Դանիել Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև 3 ամիս ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ դրական եզրակացություն.
- ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի քաղաքապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրությամբ որոշվել է, որ մայրը՝ Արփի Հովսեփյանն աշխատում է և ունի բավարար նյութական, բնակարանային-կենցաղային պայմաններ, ուստի Դանիել Հակոբյանի խնամքը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին.

6.Դատարանի իրավական վերլուծությունները.

Լսելով հայցվորի, նրա ներկայացուցչի, պատասխանողի և նրա ներկայացուցչի, երրորդ անձի ցուցմունքները, գնահատելով ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը գտավ, որ հայցապահանջը ծնողական իրավունքներից զրկելու մասին ենթակա է մերժման, երեխայի

խնամքի և բնակության վայրը հայցվորի բնակության վայր հաստատելու մասին պահանջները՝ բավարարման, իսկ ալիմենտ բռնագանձելու պահաջը՝ կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Դատաքննությամբ հաստատվեց, որ Դավիթ Հակոբյանը և Արփի Հովսեփյանն ամուսնացել են 19.09.2005թվականին: Նրանց ամուսնությունը գրանցվել է Քաշաթաղի ՔԿԱԳ բաժնում: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, 03.05.2008թվականին, նրանք ունեցել են մեկ երեխա՝ Դանիել Դավթի Հակոբյանին: Դավիթ Հակոբյանը և Արփի Հովսեփյանն ամուսնալուծվել են և գրանցել ամուսնալուծությունը Քաշաթաղի ՔԿԱԳ տարածքային բաժնում 15.02.2011թվականին: 2011թվականի հուլիսից Դավիթ Հակոբյանը երեխայի հետ տեղափոխվել, և բնակություն են հաստատել և հաշվառվել համասեփականության իրավունքով իրեն պատկանող Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարանում: ՀՀ Լոռու մարզի թիվ 28 ՆՈՒՀ համայնքային ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից 06.12.2011թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Դանիել Հակոբյանը հաճախում է Վանաձորի 28 ՆՈՒՀ:

Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2011թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 22 նիստի արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է, որ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու մասին հնարավոր չէ տալ եզրակացություն, քանի որ Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմինը չի կարող կատարել երեխայի խնամքին և դաստիարակությանը հավակնող կողմերի կյանքի պայմանների լիարժեք հետազոտություն, երեխայի խնամքի և դաստիարակության համար և Դավիթ Հակոբյանն ունի բավարար բնակարանային և կենցաղային պայմաններ:

Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովը 2012թվականի մայիսի 11-ի թիվ 11 նիստի արձանագրությամբ Արփի Հովսեփյանին ծնողնական իրավունքներից զրկելու հնարավորության մասին տվել է բացասական եզրակացություն, երեխայի՝ Դանիել Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև 3 ամիս ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ դրական եզրակացություն:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 51 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին, ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59 հոդվածի՝ ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց.

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից.

գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա.

դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը.

ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ.

զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերն ու պայմանները, որոնց առկայության դեպքում ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից:

Հայցվոր Դավիթ Հակոբյանը պատասխանող Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու պահանջ ներկայացնելով՝ չի հիմնավորել ներկայացված պահանջի փաստերը, նրա կողմից չեն ներկայացվել ապացույցներ հաստատելու համար վկայակոչված փաստերը:

Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովը 2012թվականի մայիսի 11-ի թիվ 11 նիստի որոշմամբ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու հնարավորության մասին տվել է բացասական եզրակացություն:

Հայցադիմումին կից, ինչպես նաև դատաքննության ընթացքում ներկայացված ապացույցներով հայցվոր կողմը չապացուցեց այն հանգամանքը, որ պատասխանող Արփի Հովսեփյանը չարամտորեն խուսափում է ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց կամ առանց հարգելի պատճառների հրաժարվում է վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից կամ չարաշահում է իր ծնողական իրավունքները, ընդ որում՝ իր հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն է գործում երեխայի վրա կամ դաժանաբար է վարվում երեխայի հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն է գործադրում նրա նկատմամբ, ոտնձգում է նրա սեռական անձեռնմխելիությունը կամ տառապում է քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ կամ կատարել է իր երեխայի դեմ դիտավորյալ հանցագործություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են հանդիսանում օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Նույն հոդվածի համաձայն այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
2) փորձագետների եզրակացություններով.
3) վկաների ցուցմունքներով.
4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն օրենսգրքի 49 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Ինչ վերաբերվում է հայցվոր Դավիթ Հակոբյանի կողմից ներկայացված պահանջին՝ երեխայի խնամքի և բնակության վայրը որոշելու մասին, ապա այն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվոր Դավիթ Հակոբյանն անչափահաս Դանիել Հակոբյանի հետ 2011թվականի հուլիսից տեղափոխվել է Վանաձոր քաղաք և բնակություն հաստատել համասեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանում, երեխան հաճախում է Լոռու մարզի թիվ 28 ՆՈՒՀ համայնքային ՊՈԱԿ, Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովը 2011թվականի

հոկտեմբերի 18-ի թիվ 22 նիստով որոշել է, որ երեխայի խնամքի և դաստիարակության համար Դավիթ Հակոբյանն ունի բավարար բնակարանային և կենցաղային պայմաններ:

Հետագայում, Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովը 2012թվականի մայիսի 11-ի թիվ 11 նիստի արձանագրությամբ որոշել է երեխայի՝ Դանիել Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև 3 ամիս ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ դրական եզրակացություն: Հանձնաժողովը հիմք է ընդունել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի քաղաքապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի 15.11.2011թվականի թիվ 1 նիստի որոշումն այն մասին, որ Արփի Հովսեփյանն աշխատում է և ունի բավարար նյութական, բնակարանային-կենցաղային պայմաններ՝ երեխայի խնամքի և դաստիարակության համար և նույն հանձնաժողովի թիվ 2 նիստի որոշումը, որ Արփի Հովսեփյանն աշխատում է և ունի բավարար նյութական, բնակարանային-կենցաղային պայմաններ և որոշել Դանիել Հակոբյանի խնամքը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին:

Տվյալ դեպքում, Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի կողմից ուշադրության և գնահատման չի արժանացվել Արփի Հովսեփյանի կողմից 11.01.2011թվականին գրված բացատրագիրն այն մասին, որ ինքը վարել է ոչ պարկեշտ ապրելակերպ, դավաճանել է ամուսնուն, ամուսնու արտագնա աշխատանքի ընթացքում հարաբերություններ է ունեցել այլ տղամարդկանց հետ ամուսիններին ընդհանուր պատկանող տանը, տուն թողնելով երկու անժանոթ տղամարդու և ալկոհոլային խմիչք օգտագործելով՝ վտանգի է ենթարկել քնած որդուն, վտանգ ստեղծել որդու առողջական վիճակի համար: Պատասխանող Արփի Հովսեփյանը բացատրագիրն ավարտել է այն բովանդակությամ, որ բացատրագիրը գրված է իր ձեռքով, սթափ վիճակում, առանց կողմնակի անձանց ճնշման և ճիշտ է:

Վերոնշյալ բացատրագիրը գրվել է 11.01.2011թվականին, դատաքննությամբ պատասխանող Արփի Հովսեփյանն ընդունեց այն իր կողմից գրելու փաստը, սակայն նրա պատճառաբանություններն այն մասին, որ այն գրել է ընտանիքը փրկելու նպատակով, հայցվորը պետք է այն պատռեր, փաստերը չեն համապատասխանում իրականությանը՝ չհիմնավորվեց ու չհաստատվեց նրա կողմից:

Պատասխանող Արփի Հովսեփյանի կողմից դատարան չներկայացվեցին ապացույցներ բացատրագիրը ճնշման, սպառնալիքի տակ գրելու և այն իրականությունը չարտացոլելու մասին: Բացատրագրի վերաբերյալ նրա կողմից բողոք չի ներկայացվել և այդ կապակցությամբ նա իրավապահ մարմիններին չի դիմել:

<<Երեխայի իրավունքների մասին>> 1989 թվականի նոյեմբերի 20-ի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

Հետևաբար հիշյալ վեճը լուծելիս ևս հարկ է առաջնորդվել միայն երեխայի շահերի առավել ապահովման սկզբունքով: Նշված սկզբունքի կիրառմամբ դատարանը գտնում է, որ երեխայի խնամքը հորը թողնելը և բնակության վայրը հայցվոր Դավիթ Հակոբյանի բնակության վայրը որոշելը բխում է երեխայի շահերի առավել ապահովման անհրաժեշտությունից:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

<<Երեխայի իրավունքների մասին>> կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե

դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Անչափահաս Դանիել Հակոբյանը գտնվում է հոր՝ Դավիթ Հակոբյանի խնամքին: Հայրն է իրականացնում նրա խնամքն ու դաստիարակությունը և բնակվում է Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարանում և հաճախում թիվ 28 ՆՈՒՀ:

Ինչ վերաբերվում է ներկայացված ապացույցներին այն մասին, որ Դավիթ Հակոբյանը զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության Քաշաթաղի զինկոմիսարիատի կողմից 25.05.2005թվականին, 25.05.2007թվականին զորացրվելով՝ հաշվառվել է Քաշաթաղի ԶԿ-ում 29.05.2007թվականին, 24.06.2011թվականին դուրս է գրվել Քաշաթաղի ԶԿ-ի հաշվառումից և մեկնել մշտական բնակության ՀՀ քաղաք Վանաձոր և հաշվառվել է Վանաձորի ԶԿ-ում, հայցվորի մայր՝ Աիդա Թումանյանի աշխատանքի վերաբերյալ տեղեկանքը, 047752389 հեռախոսահամարը ԼՂՀ սոցիալական ապահովության Քաշաթաղի տարածքային բաժնին պատկանելու մասին գրությունը, հաշվի մանրամասնությունները և բանկային հաշիվները, ինտերնետային կայքից տպված նյութերը, հողամասի նվիրատվության պայմանագիրը, տուն-տնամերձի սեփականաշնորհման մասին որոշումը, Արփի Հովսեփյանի ինտերնետային կայքում գրանցված լինելու մասին նյութերը, Դավիթ Հակոբյանի աշխատանքի չհաճախելու մասին տեղեկանքը, ապա դրանք սույն քաղաքացիական գործով վերաբերելի ապացույցներ չեն հանդիսանում և դատարանը դրանք հանում է ապացույցներ կազմից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 2-րդ կետի՝ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

Վերը նշված պատճառաբանություններով դատարանը եկավ այն համոզման, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը՝ երեխայի խնամքն իրեն թողնելու և բնակության վայրը Վանաձոր քաղաքը որոշելու մասին, հիմնավոր են և ենթակա՝ բավարարման:

<u>Հայցվոր Դավիթ Հակոբյանի կողմից ներկայացված ալիմենտի բռնագանձման մասին պահանջը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ՝</u>

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի՝ հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

28.06.2012թվականի դատական նիստին հայցվոր Դավիթ Հակոբյանը հրաժարվեց իր կողմից ներկայացված ալիմենտի բռնագանձման պահանջից:

<u>7.Դատական ծախսեր.</u>

Ինչ վերաբերվում է դատական ծախսերին, ապա հայցվորի կողմից դատարան ներկայացված սկզբնական պահանջով պետական տուրք է վճարվել 4.000 ՀՀ դրամ, հետագայում նրա կողմից ավելացվել է հայցապահանջները՝ պահանջ ներկայացնելով

երեխայի խնամքն իրեն թողնելու և բնակության վայր սահմանելու մասին, սակայն պետական տուրքի վճարում չի կատարել:

Քանի որ ավելացված հայցապահանջները ենթակա են բավարարման, հետևաբար հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել չվճարված երկու պահանջների համար պետական տուրքի գումարը, ընդամենը՝ 8.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Տ

1. Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ Արփի Հովսեփյանին ծնողական իրավունքներից զրկելու պահանջի մասին, մերժել:

2. Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի, երրորդ անձ Վանաձորի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի խնամքի և բնակության վայրը հաստատելու պահանջների մասին, բավարարել.

03.05.2008թվականին ծնված անչափահաս Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը թողել հ որը՝ Դավիթ Հակոբյանին և երեխայի բնակության վայրը որոշել հոր բնակության վայրը՝ ՀՀ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 117 շենքի 5 բնակարան հասցեն:

3 Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի հայցապահանջն ընդդեմ Արփի Հովիկի Հովսեփյանի՝ ալիմենտ բռնագանձման մասին, կարճել:

4. Արփի Հովիկի Հովսեփյանից հօգուտ պետական բյուջեի, որպես պետական տուրք, բռնագանձել 8.000 ՀՀ դրամ:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, հրապարակման պահից 1 /մեկ/ ամսվա ընթացքում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծանոթություն. վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ _____ 2012թ.

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ինդեքս 2121 Վանաձոր Գ.Նժդեհի 16 հեռ. (0322) 4 30-68 (0322) 2-44-76

№ 12832

«29» 12 2013 թ.

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին
ք. Վանաձոր, Երևանյան խճ. 117/5

Արփի Հովիկի Հովսեփյանին
ԼՂՀ, Քաշաթաղի շրջան, գ. Բերձոր, 7 փող., 19/12

ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնում հարուցված թիվ 06-3489/13 կատարողական վարույթի համաձայն պետք է 03.05.2008թ. ծնված Դանիել Հակոբյանի խնամքն ու դաստիարակությունը հանձել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայրը սահմանել վերջինիս մոտ:

Կատարողական թերթի պահանջը կատարելու համար կատարողական գործողությունների կատարման օր է սահմանվում 2014թ. հունվարի 10-ին, ժամը 12.00-ին: Կողմերին տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է գրությամբ նշված օրը և ժամին ներկայանալ ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի վարչական շենք (ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 16) երեխային Արփի Հովսեփյանին հանձնելու կատարողական գործողություններ իրականացնելու նպատակով:

Բաժնի պետ
Արդարադատության գնդապետ *Ա. Բաղդագյուլյան*

Կատ. Բ. Աբրահամյան
Հեռ. (0322) 4-29-62
ն/ա 06-3489/13 ծանոթ 32-937 24.10.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ինդեքս 2121 Վանաձոր Գ.Նժդեհի 16 հեռ. (0322) 4 30-68 (0322) 2-44-76

№ 11011

«06» 11 2013 թ.

Արփի Հովսեփյանին
Մաշտոցի շրջան, թ. Բերձոր, 7 թղմ. 19/12

Պատճենը- Դավիթ Հակոբյանին
թ. Վանաձոր, Երևանյան խճուղի 117/5

Ուղարկվում է ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ կատարողական վարույթը վարույթ ընդունելու մասին:

Առդիր՝ 1 թերթից:

Բաժնի պետ
Արդարադատության գնդապետ *Ա. Բաղդասարյան*

Լուսա Գ. Սարգսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կատարողական վարույթը վարույթ ընդունելու մասին

«28» հոկտեմբերի 2013թ. ք. Վանաձոր

ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Բելա Աբրահամյանս ուսումնասիրելով ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Մ. Մակյանից ստացված թիվ 3-1891/13 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 12.09.2013թ. տրված թիվ 1402/02/11 կատարողական թերթի համաձայն՝ պետք է Դանիել Ֆավիթի Հակոբյանի՝ ծնված 03.05.2008թ. խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայրը սահմանել վերջինիս հետ:

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածով և 32 հոդ. 3 մասի 1-ին կետի

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

02.10.2013թ. հարուցված և հարկադիր կատարող Մ. Մակյանից ստացված թիվ 3-1891/13 կատարողական վարույթը ընդունել իմ վարույթ և գրանցել նոր համար՝ 06-3489/13:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել դատական կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող
Արդարադատության կապիտան Բ. Աբրահամյան

1402/02/11 «28» հունիսի 2013թ.

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին
ՀՀ Լոռու մարզ ք.Վանաձոր
Երևանյան խճուղի 117 շենք բնակ. 5

Ուղարկվում է թիվ 1402/02/11 քաղաքացիական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013թ. հունիսի 28-ի վճիռը:

Ա ռ դ ի ր՝ վճիռը «3» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ.Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Քաղ.գործ ԸԻԴ 1402/02/2011թ.

Վ Ճ Ի Ռ

Հանուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

«28» հունիսի 2013թ. ք.Շուշի

ԼՂՀ Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ Դատարան)՝
նախագահությամբ՝ դատավոր Մ.Ս.Ստեփանյանի,
քարտուղարությամբ՝ Գ.Դավթյանի,
մասնակցությամբ
հայցվոր՝ Ա.Հովսեփյանի (անձնագիր՝ AF 0683896),

դռնբաց դատական նիստում, 2013թ. հունիսի 20-ին քննելով քաղաքացիական գործն ըստ Արփի Հովիկի Հովսեփյանի հայցի ընդդեմ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի, երրորդ անձեր՝ Բերձորի և Վանաձորի քաղաքապետարանների խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

Արփի Հովիկի Հովսեփյանը Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի դեմ 2011թ. օգոստոսի 15-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ Դանիել Դավիթի Հակոբյանի բնակության վայրն իր հետ որոշելու պահանջով:

Դատարանի 2011թ. օգոստոսի 15-ի որոշումով հայցադիմումն ընդունվել, հարուցվել է քաղաքացիական գործ և նշանակվել դատական քննության 2011թ. սեպտեմբերի 07-ին Քաշաթաղի նստավայրում:

Պատասխանող Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը հայցադիմումին գրավոր պատասխան չի ներկայացրել:

Դատարանի 2011թ. սեպտեմբերի 7-ի որոշումով գործի վարույթը կասեցվել է, մինչև ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԼԴ 0514/02/11 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

2012թ. մայիսի 10-ին քաղաքացիական գործը հանձնվել է ԼՂՀ Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ.Ստեփանյանին:

Դատարանի 2013թ. փետրվարի 1-ի որոշումով գործի վարույթը վերսկսվել է և նշանակվել դատական քննության 2013թ. մարտի 12-ին Շուշի քաղաքում:

Դատարանի 2013թ. մարտի 12-ի որոշումով ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանը ներգրավվել է քաղաքացիական գործով որպես երրորդ անձ:

2013թ. մարտի 12-ին ժամը 12:00-ին Շուշի քաղաքում կայանալիք դատական նիստը հետաձգվել է պատասխանող Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի չներկայանալու պատճառով և նշանակվել 2013թ. մայիսի 21-ին ժամը 11:00-ին Շուշի քաղաքում:

2013թ. մայիսի 21-ին ժամը 11:00-ին Շուշի քաղաքում կայանալիք դատական նիստը հետաձգվել է պատասխանող Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի չներկայանալու պատճառով և նշանակվել 2013թ. հունիսի 20-ին ժամը 11:00-ին Շուշի քաղաքում:

2013թ. հունիսի 20-ին կայանալիք դատական նիստին պատասխանող Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը չնայած պատշաճ կարգով ծանուցված է եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, կրկին դատական նիստին չի ներկայացել և Դատարանը ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում է ընդունել գործը պատասխանողի բացակայությամբ քննելու մասին:

2. [illegible]

Հայցվոր Արփի Հովիկի Հովսեփյանն իր հայցը հիմնավորում է նրանով, որ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի հետ ամուսնացել է և իրենց ամուսնությունը ՔԿԱԳ Քաշաթաղի շրջբաժնում գրանցվել է 2005թ. սեպտեմբերի 19-ին: Համատեղ կյանքից՝ 2008թ. մայիսի 20-ին ծնվել է իրենց որդի Դանիել Դավիթի Հակոբյանը: Մինչև 2010թ. մարտի 23-ն ընտանիքով բնակվել են Բերձոր քաղաքի 7-րդ թաղամասի թիվ 87/2 հասցեում գտնվող կեսարայրին պատկանող բնակարանում, իսկ դրանից հետո՝ քաղաքապետարանի կողմից, նույն թաղամասում իրենց ընտանիքին հատկացված թիվ 62/11 բնակարանում: Ամուսինն աշխատել է «Արցախբանկ» ՓԲԸ Բերձորի մասնաճյուղում, որպես վարկային բաժնի մասնագետ, իսկ ինքը՝ սոցիալական ապահովության Քաշաթաղի տարածքային բաժնում, որպես առաջատար մասնագետ: Իրենց անչափահաս որդին հաճախել է Բերձորի մանկապարտեզ: Նոր բնակարան տեղափոխվելուց հետո ամուսինը սկսել է խանդել իրեն և արգելել շփվել նույնիսկ հարևանների հետ: Դա ավելի ակնհայտ է դարձել Վանաձոր քաղաքից վերադառնալուց հետո, որտեղ նա ժամանակավոր աշխատում էր: Իրենց հարաբերությունների վատթարացման պատճառով ստիպված, փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել են և իրենց ամուսնալուծությունը ՔԿԱԳ Քաշաթաղի բաժնում գրանցվել է 2011թ. փետրվարի 15-ին: Չնայած դրան շարունակել են բնակվել նույն հարկի տակ, քանի որ այլ բնակվելու տարածք չուներ, իսկ ամուսինը չի ցանկացել տեղափոխվել և բնակվել նույն թաղամասում տեղակայված ծնողներին պատկանող բնակելի տանը: Չնայած ամուսնալուծվել էին, սակայն Դ.Հակոբյանը շարունակում էր տնօրինել և կառավարել իր կյանքը, նույնիսկ նա իրեն չէր վերադարձնում աշխատավարձի բոլորը և իր փոխարեն ստանում էր աշխատավարձը և իր համար անհրաժեշտ ծախսերն անձամբ էր կատարում: Քանի որ նա խանդում էր իրեն, այդ պատճառով տարբեր անհիմն պատճառներով, խանդի հողի վրա իրեն այնքան է ծեծի ենթարկել ու ստիպելով իրեն հարկադրաբար գրել է տվել խոստովանագիր, որ իբր իրեն դավաճանել է: Չնայած իր կյանքում նման երևույթ ընդհանրապես չի եղել, սակայն նա իր և երեխայի կյանքը փրկելու համար ստիպված է եղել կատարելու նրա պահանջը և գրել ու տվել է նրան այն, ինչ նա է թելադրել: Բայց նա դրանից հետո անգամ շարունակում է սպառնալ, որ իրեն կվռնդի և՛ բնակարանից, և՛ երեխայից: Նույնիսկ բազմաթիվ անգամ Դ.Հակոբյանը տարբեր ճանապարհներով դիմել է ծնողներին, որ գան և իրեն տանեն Վայք՝ իրենց մոտ և նույնիսկ 2011թ. հունիսի 21-ին հեռախոսագրություն է ուղարկել նրանց առաջարկելով, որ օգտագործեն վերջին հնարավորությունը և գան իրեն տանեն, հակառակ դեպքում խոստանում էր կազմակերպել խայտառակություն: 2011թ. հուլիսի 22-ին Դ.Հակոբյանը Երևանին առանց իր թույլտվության վերցնելով մանկապարտեզից, մեկնել է անհայտ ուղղությամբ և միայն, երբ հնարավորություն է ունեցել հեռախոսով կապվել նրա հետ պարզվել է, որ նրանք գտնվում են Երևան քաղաքում և վերջինս հայտնել է, որ շուտով կվերադառնան: Տեսնելով, որ չեն վերադառնում հուլիսի 29-ին նորից զանգել և խնդրել է, որ վերադարձնի երեխային և իրեն թույլատրի իրենց հետակազված բնակարանի դուռն ինչ որ ձևով բացի և մտնի ներս, սակայն նա արգելել է: Երբը ստիպված գրավոր դիմել է ոստիկանություն, խնդրելով օգնեն երեխան վերադարձնելու և բնակարան մուտք գործելու հարցում: Ոստիկանության աշխատակիցները Դավիթ Հակոբյանի հետ հեռախոսազրույցից հետո իրեն հայտնել են, որ մինչև շաբաթվա վերջը նա երեխան կվերադարձնի, սակայն իմանալով նրա բնավորությունը և նրա նպատակները հանդգնվել է, որ նա երեխան գողացել է և ինչպես խոստացել էր՝ նպատակ ուներ իրեն զրկելու նրա հետ շփվելու, նրան խնամելու և դաստիարակելու հնարավորությունից: Պատասխանող կողմի իրեն խանդելը միանշանակ անհիմն է և ինքը նույնիսկ չի էլ մտածել այն մասին, որ կարելի է դավաճանել ամուսնուն՝ իր որդու հորը և եթե կյանքում նման դեպք լիներ ապա դա կնկատեին նրա ծնողները, որոնց մոտ երկար տարիներ ապրել է՝ այն տարիներին, երբ նա ծառայել է բանակում: Բայց փաստը մնում է փաստ, որ իրենք ամուսնալուծվել են և երեխան գտնվում էր իր խնամքի ներքո, սակայն պատասխանողն առանց իր թույլտվության գողացել է երեխային և տարել ԼՂՀ տարածքից դուրս, որի պատճառով էլ երեխան զրկվել է ոչ միայն մոր խնամքից այլ նաև մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Ամուսնալուծվելուց, իրենք երկուսով պայմանավորվել էին, որ երեխան, որը դեռևս երեք տարեկան է, բնակվի իր հետ ու մնա իր խնամքի ներքո՝ առավել ևս որ նա ունի մոր խնամքի կարիք, իսկ ինքն ունի որպես մայր,

ալաս խանգարել...

Բացի նրանից, որ օրենքն է թույլատրում, երբեք չի պահանջել ... հոր շփվելուն, նույնիսկ նրանից ալիմենտ էլ չի պահանջել, քանի որ ապահով լի պատճառով դրա կարիքը չի ունեցել: Հակառակ իր նման վարվելակերպի, գոյ պատասխանող՝ Դավիթ Հակոբյանը երեխային իրենից գաղտնի և իր կամքին հակա վերցրել ու տարել է հանրապետության սահմաններից դուրս և թե երբ կվերադառնան, ո չի կարող իմանալ: Դ.Հակոբյանի նման ձևով իր ծնողական իրավունքների իրականաց գտնում է, որ հակաօրինական է, նախ և առաջ հակասում է երեխայի շահերի բացասաբար է ազդում, ինչպես երեխայի խնամքի, այնպես էլ՝ նրա սննդի, մաքրությ այլ կարևոր հարցերի լուծմանը: Այդ իսկ պատճառով էլ ինքը, օգտվելով իր մայր ծ իրավունքներից և ելնելով իրենց երեխայի շահերից խնդրել է դատարանին հաշվի առն հնարավորությունները և երեխան թողնել իր հետ բնակվելու՝ առավել ևս որ պատասխ կողմը՝ որպես հայր ծնող, չի կարող երեք տարեկան հասակում գտնվող երեխային խն այնպես ինչպես դա կանի մայր ծնողը: Դատարանից խնդրել է 2008թ. մայիսի 03-ին ծ Դանիել Դավիթի Հակոբյանին թողնել բնակվելու իր՝ Արփի Հովիկի Հովսեփյանի հետ, ո մայր ծնողի:

Հայցվոր Արփի Հովսեփյանը դատական նիստում հայցը պնդել է:

3. <u>Պատասխանողի դիրքորոշումը.</u>

Պատասխանող Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը հայցադիմումին գր պատասխան չի ներկայացրել, դատական նիստին չի ներկայացել և որևէ դիրքորոշ արտահայտել:

4. <u>Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի դիրքորոշում</u>

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի քաղաքապետարանի և ՀՀ Լոռու Վանաձորի քաղաքապետարանի ներկայացուցիչները դատական նիստին չեն ներկա ու խնդրել են գործի քննությունն անցկացնել առանց իրենց մասնակցության հիմք ընդ ներկայացրած եզրակացությունները, որոնց համաձայն. «Արփի Հովսեփյանն աշխատ ունի կայուն եկամուտ, աշխատանքի և բնակության վայրերից բնութագրվում է դրակա ու վարում է պարկեշտ կյանք: Պայմանները բավարար են երեխայի խնա դաստիարակության համար: Միաձայն քվեարկությամբ հանձնաժողովը որոշել է Դավիթի Հակոբյանի խնամքը թողնել մոր՝ Արփի Հովսեփյանին», ինչպես նաև. «մի քվեարկությամբ հանձնաժողովը որոշել է Դանիել Դավիթի Հակոբյանի խնա դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ ո եզրակացություն»:

5. <u>Գործի փաստերը.</u>

1) Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը և Արփի Հովիկի Հովսեփյանը գրա համատեղ ամուսնությունից ունեն մեկ երեխա՝ Դանիել Դավիթի Հակոբյանին, ծնվա մայիսի 03-ին:

2) Դավիթ Հովհաննեսի Հակոբյանը և Արփի Հովիկի Հովսեփյանն ամուսնաց 2011թ. փետրվարի 15-ին և նրանց ամուսնալուծությունը գրանցվել է Քաշաթաղ տարածքային բաժնում:

3) Անչափահաս Դանիել Հակոբյանը հոր՝ Դավիթ Հակոբյանի հետ 2011 ամսից բնակվում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

4) ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի քաղաքապետարանին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2013թ. փետրվարի 21- արձանագրության քաղվածքի համաձայն՝ Արփի Հովսեփյանն աշխատում է և ու եկամուտ, աշխատանքի և բնակության վայրերից բնութագրվում է դրականորեն ու պարկեշտ կյանք: Պայմանները բավարար են երեխայի խնամքի և դաստիար համար: Միաձայն քվեարկությամբ հանձնաժողովը որոշել է Դանիել Դավիթի Հ խնամքը թողնել մոր՝ Արփի Հովսեփյանին:

5) ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանին կից գործող խնամակ և հոգաբարձության հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի նիստի արձանա քաղվածքի համաձայն՝ միաձայն քվեարկությամբ հանձնաժողովը որոշել է Դանի Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին

[illegible] գրավոր գրություն:

6. <u>Դատարանի եզրահանգումները և կիրառելի իրավական նորմերը</u>:

Լսելով հայցվորի ցուցմունքը և նրա ներկայացուցչին, ուսումնասիրելով Քաշաթաղի շրջանի Բերձորի և ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարաններ գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերի արձանագրությունների քաղվածքները, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները և գնահատելով դրանք, բոլոր ապացույցների լրիվ, բազմակողմանի օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ Դատարանը գալիս է եզրահանգման, որ հայցը ենթակա է բավարարման՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով:

Հայցվոր Արփի Հովիկի Հովսեփյանի ցուցմունքով, ամուսնության և ծննդյան գրանցման վերաբերյալ տեղեկանքներով Դատարանը հաստատված է համարում, որ [illegible] Հովհաննեսի Հակոբյանը և Արփի Հովիկի Հովսեփյանը ամուսնացել են 2005թ. սեպտեմբեր 19-ին և նրանց ամուսնությունը նույն օրը գրանցվել է Քաշաթաղի ՔԿԱԳ տարածքային բաժնում: Գրանցված համատեղ ամուսնությունից կողմերն ունեն մեկ երեխա՝ Դավիթ Դավիթի Հակոբյան, ծնված 2008թ. մայիսի 03-ին:

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի քաղաքապետարանի կողմից տրված թիվ 31 23.03.2010թ. բնակեցման թերթիկի պատճենով Դատարանը հաստատված է համարում, որ Բերձորի քաղաքապետարանը Բերձոր քաղաքի 7-րդ թաղամասի թիվ 62/11 բնակարան հատկացրել է Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի ընտանիքին՝ Արփի Հովսեփյանին և Դավիթ Հակոբյանին բնակվելու իրավունքով:

Հայցվորի ցուցմունքով և ամուսնալուծության ակտի գրանցման վկայարան տեղեկանքով Դատարանը հաստատված է համարում, որ Դավիթ Հովհաննեսի Հակոբյան Արփի Հովիկի Հովսեփյանն ամուսնալուծվել են 2011թ. փետրվարի 15-ին և նրա ամուսնալուծությունը գրանցվել է Քաշաթաղի ՔԿԱԳ տարածքային բաժնում:

Հայցվորի ցուցմունքով և հայցադիմումով Դատարանը հաստատված է համարում, կողմերն ամուսնալուծվելուց հետո շարունակել են բնակվել Բերձոր քաղաքի 7-րդ թաղամաս թիվ 62/11 բնակարանում և անչափահաս Դանիել Հակոբյանը գտնվել է մոր՝ Արփի Հովսեփյանի խնամքին, իսկ 2011թ. հուլիսի վերջերին Դավիթ Հակոբյանը վերցնելով որդի Դանիել Հակոբյանին, տեղափոխվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաք և առայսր երեխան գտնվում է հոր խնամքին:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծնողները ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողները միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ նկատելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)»:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրի, խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որևէ մեկին հանձնելու հետ կապված վեճի լուծման իրավասությունը բոլոր դեպքերում վերապահվում է Դատարանին՝ վերջինիս վերապահելով հայեցողական ազատություն: Այդ դեպքում, իր այդ լիազորությունն իրականացնելով Դատարանը պարտադիր կերպով պետք է հաշվի առնի երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողների և յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի արձանագրության քաղվածքով Դատարանը հաստատված է համարում, որ Արփի Հովսեփյանն աշխատում է և ունի կայուն եկամուտ, աշխատանքի և բնակության վայրերից բնութագրվում է դրականորեն ու վարում է պարկեշտ կյանք: Պայմանները բավարար են երեխայի խնամքի և դաստիարակության համար և հանձնաժողովը միաձայն քվեարկությամբ որոշել է Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը թողնել մոր՝ Արփի Հովսեփյանին:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի նիստի արձանագրության քաղվածքով Դատարանը հաստատված է համարում, որ հանձնաժողովի միաձայն քվեարկությամբ հանձնաժողովը որոշել է Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին և տարվա մեջ մինչև 3 ամիս ժամկետով հորը՝ Դավիթ Հակոբյանին, հանձնելու հնարավորության մասին տալ դրական եզրակացություն:

Հաշվի առնելով երեխայի՝ Դանիել Դավիթի Հակոբյանի, ծնված 2008թ. մայիսի 03-ին, տարիքը, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը, ելնելով երեխայի շահերից ու առաջնահերթ ուշադրություն դարձնելով երեխայի շահերի առավել ապահովմանը, երաշխավորելով նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությունը և հոգատարությունը և այն, որ մայր ծնողը՝ Արփի Հովսեփյանը, ունի մշտական աշխատանք և կայուն եկամուտ, նորմալ բնակարանային պայմաններ՝ երեխայի խնամքի ու դաստիարակության համար, ինչպես նաև ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի և ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանների կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների եզրակացությունները՝ Դանիել Դավիթի Հակոբյանի խնամքը և դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովսեփյանին, Դատարանը գտնում է, որ նման պայմաններում Դանիել Հակոբյանի նկատմամբ ավելի մեծ հոգատարություն և խնամք կարող է ցուցաբերել մայր ծնողը՝ Արփի Հովսեփյանը:

Դատարանը նկատի ունենալով, որ Դավիթի Հակոբյանը դատական նիստին չի ներկայացել, չի ներկայացրել ոչ ապացույց, ոչ էլ հայցադիմումի պատասխան, ինչը Դատարանը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի ուժով գնահատում է որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում, ուստի՝ գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, հաշվի առնելով մատնանշված հանգամանքները, ելնելով երեխայի շահերից գտնում է, որ Դանիել Հակոբյանի բնակության վայրը պետք է սահմանել մոր՝ Արփի Հովսեփյանի հետ:

7.<u>Դատական ծախսերը:</u>

Քննության առնելով դատական ծախսերի լուծման հարցը և հաշվի առնելով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջներին համամասնորեն, ուստի Դատարանը գտնում է, որ Դավիթի Հակոբյանից հօգուտ Արփի Հովսեփյանի պետք է գանձել 4.000 ՀՀ դրամ:

8. <u>Վճռի եզրափակիչ մասը:</u>

Վերը շարադրվածի հիման վրա, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123, 129-130 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել:
2. Դանիել Դավիթի Հակոբյանի՝ ծնված 2008թ. մայիսի 03-ին, խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր սահմանել վերջինիս հետ:

4.000 (չորս հազար) ՀՀ դրամ:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից սկսած ամսվա ընթացքում և կարող է բողոքարկվել ԼՂՀ վերաքննիչ դատարան՝ նշված ժամկետի ընթացքում:

Ծանոթություն. վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի հարկադիր կարգով՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ.Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ք.Ստեփանակերտ, Մ.Գոշի 7ա.: ☎ (047) 94-91-36

Թիվ 03-5845
« 02 » 10 2013թ.

Արփի Հովիկի Հովսեփյանին
ՀՀ Քաշաթաղի շրջ., ք.Բերձոր 7-րդ թղմ. 19/12

պատճեն՝

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանին
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճուղի 117/5

Ուղարկվում է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության առաջին տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումները՝ կատարողական վարույթ հարուցելու և կատարողական վարույթը տարածքային կատարման ուղարկելու մասին՝ ի գիտություն:

Առդիր՝ 2 թերթ:

Բաժնի պետ
Արդարադատության մայոր Ա.Լ.Ղուլյան

Կատ. Մ.Մակյան
հեռ. (047) 94-91-36
թիվ 3-1891/13 Կ/Վ

ՈՐՈՇՈՒՄ
Կատարողական վարույթ հարուցելու մասին

02.10.2013թ. ք.Ստեփանակերտ

ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության առաջին տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Մ.Ս.Մակյանս, ուսումնասիրելով ԼՂՀ Ը/Ի առաջին ատյանի դատարանի կողմից 30.09.2013թ. տրված թիվ 1402/02/11 կատարողական թերթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ԼՂՀ Ը/Ի առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ 1402/02/11 կատարողական թերթի համաձայն՝ Դանիել Դավիթի Հակոբյանի (ծնված՝ 03.05.2008թ.) խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր սահմանել վերջինիս հետ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «ԴԱՀԿ մասին» ԼՂՀ օրենքի 28, 30 և 67 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Հարուցել՝ թիվ 3-1891/13 կատարողական վարույթ՝ Դանիել Դավիթի Հակոբյանի (ծնված՝ 03.05.2008թ.) խնամքն ու դաստիարակությունը թողնելու մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր վերջինիս հետ սահմանելու վերաբերյալ:

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանից անհրաժեշտ է բռնագանձել 5.000 դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«ԴԱՀԿ մասին» ԼՂՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող
Արդարադատության կապիտան Մ.Ս.Մակյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կատարողական վարույթը տարածքային կատարման ուղարկելու մասին

02.10.2013թ. ք. Ստեփանակերտ

ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության առաջին տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Մ.Ս.Մակյանս, ուսումնասիրելով 02.10.2013թ. հարուցված թիվ 3-1891/13 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ԼՂՀ Ը/Ի առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ 1402/02/11 կատարողական թերթի համաձայն՝ Դանիել Դավիթի Հակոբյանի (ծնված՝ 03.05.2008թ.) խնամքն ու դաստիարակությունը թողնել մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր սահմանել վերջինիս հետ:

Դավիթ Հովհաննեսի Հակոբյանից անհրաժեշտ է բռնագանձել 5.000 դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտապան՝ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճուղի 117/5, ուստի անհրաժեշտ է սույն կատարողական վարույթը ուղարկել ըստ տարածքային կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «ԴԱՀԿ մասին» ԼՂՀ օրենքի 28 32 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ուղարկել՝ Դանիել Դավիթի Հակոբյանի (ծնված՝ 03.05.2008թ.) խնամքն ու դաստիարակությունը թողնելու մորը՝ Արփի Հովիկի Հովսեփյանին և բնակության վայր վերջինիս հետ սահմանելու, ինչպես նաև 5.000 դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս բռնագանձելու վերաբերյալ 02.10.2013թ. հարուցված թիվ 3-1891/13 կատարողական վարութը՝ ըստ տարածքային կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ԼՂՀ 1-ին ատյանի դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«ԴԱՀԿ մասին» ԼՂՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող
Արդարադատության կապիտան Մ.Ս.Մակյան